



Մ ՈՒՐՐ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ԾՆՈՒՄ ԵՒ ԱՍՏԻՃԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՄ ՔՐԻՍՏՈՍ

06 ՅՈՒՆԻՄԱՐ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1
Ծանուցումներ էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՏՈՍԻ ԳՐԱԾ ՀՈՎՈՒԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ (2.11-15)

Աստուած իր շնորհքը յայտնեց, որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը կը մղէ մեզ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գրոծերու նախանձախնդիր:

Այս բաները սորվեցուր հաւատացեալներուդ. քաջալերէ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ՝ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս որ ոեւէ մէկը քեզ չարհամարհէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՆՈՍԻ (1.18-25)

Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի

ծնունդը: Իր մայրը՝ Մարիամ նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախ քան ամուսնութիւնը Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն:

Յովսէփ, իր նշանածը, արդար մարդ ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զինք, այլ խորհեցաւ լռելեայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը: Մինչ այս մասին կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրեն երազի մէջ եւ ըսաւ. «Յովսէփ, Դաւիթի՛ որդի, մի՛ վախնար, ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ ան որ իրմէ պիտի ծնի Սուրբ Հոգիէն է: Անիկա զաւակ մը պիտի ծնի եւ զայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»: Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի Տիրոջ կողմէ ըսուածը Եսայի մարգարէին միջոցաւ.

«... ան որ իրմէ պիտի ծնի Սուրբ Հոգիէն է: ... ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ »:

“Ա հ ա լ ա ս ի կ կ ո յ ս ը պ ի տ ի յ ղ ա ն ա յ եւ ո Ր դ ի մ ը ծ ն ի : Ա ն ի կ ա է մ մ ա ն ու է լ պ ի տ ի կ ո չ ու ի , որ կ ը ն շ ա ն ա կ է ՝ Ա ս տ ու ա ծ մ է գ ի հ ե տ ”:

Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայած էր իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ զաւակը ծնաւ, եւ զայն Յիսուս կոչեց:

ԾՆՆԴԵԱՆ ԻԴՂԱԳԻՆ
Ս. ԾԱՆԴԵԱՆ ՏՕՒՆ ԱՌԹԻ,
ՎԱՏԱՀ ԵՆՔ,
ՈՐ յԵՐ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՈՐԴՆ
ՊԻՏԻ ՉԱՌՈՆԱՂ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻԴՂԱԳԻՆԻ ԻՐ
ԱՐՏԱԲՈՒՄ ԱՌԻՐԱՏՈՒԹՅԱՆԸ:

Այժեյեժէ՛ք
ԵԿԵՂԵՑՈՅՍ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՉՈՐ
ԵՒ

ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹՅԱՆ
յԱՅՏԵՑԷՔ (like).

[www.facebook.com/
SourpHagopChurch-
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

Այժեյեժէ՛ք ԱԿԵ
Ս. ՅԱԿՈՒԲ
ԱՌԱՉԱՌՐՈՂԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ
ԿԱՂՔԷՉՈՐ

www.sourphagop.net

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԽԱԾԵԳԷՔ ԻՆՈՒՃԱՅԻՆԵԼ
Արժ. Տ. ԳԱՆՆԻԿ ՔԻՆՅ.
ԳՈՅՈՒՆԵԱՆԻ.

ՏՆՕՐՀՆԷՔ

ՏՆՕՐԻՆԷՔ ՎԱՓԱՔՐՈՂ
ՈՐԱՏԱՆԻՔՆԵՐՈՐ,
ՔՐՈՂ ԲԱՐԵԽԱԾԻՆ ՊԻՄԵԼ
Տ. ԳԱՆՆԻԿ ՔԻՆՅ. ԳՈՅՈՒՆԵԱՆԻ,
ԻՆՈՒՃԱՅԻՆԵԼՈՂ
514 909 5203 թԻՒՆ:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՌՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՆԵՐՈՐ
ԱԽՈՐՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԷՔ ԿԱՊՈՒԿԵԼՈՂ
ԵԿԵՂԵՑՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՄ:

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՆ Ե-ԱԿԱՎԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՒՊԱՐԿԵՑԷՔ
eglise58@sourphagop.com

ԹԵՐԹԻԿԻ ԱԽՈՐՐՈՂ ԹԻԿԵՐՈՐ
ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.net
ԿԱՂՔԷՉԻՆ ԿՐԱՂ

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՅԱԲ
ՁԵՉՐԻ ՄԵՉՐԻ ՄԵԾ ԱԲԵՏԻՍ